

Գարանաղցի սոյն Յիշատակարանին մէջ կը պատմէ ի սկզբան, թէ 1628էն քանի մը տարի յառաջ Գր. Վ. Կեսարացի Պոլիս եկած էր Կեսարիայէն, եւ սաստելով ու նախատելով զլացած էր իր աջակցութիւնն այն Հայերուն, որոնք կը ջանային Կէօմրիւկի Ս. Նիկողայոս եկեղեցին (Էտիրնէ Գափոււի մօտ, այժմու Քէֆէլի Ճամի), Տաճկաց ձեռքէն ազատել: Կեսարացւոյն նման՝ նաեւ Խուլ Յովհ. Պատրիարք անփոյթ կը գտնուի այս մասին, վասն զի երկուքն իրարու հետ կը մարտնչէին Պատրիարքական աթոռին համար, որով ազգին մէջ մեծ աղմուկ եւ խռովութիւն կը յառնէ. Կեսարացին կը յաջողի Խուլը մինչեւ Պաուսա փախցընել, եւ ինքը բռնութեամբ՝ առանց արքունի հրամանի, կը տիրէ Խուլին աթոռին, իրեն փոխանորդ կը դնէ Երզնկացի Յովանէս Պակթամուր ձագն, եւ ինքը Լեհաստան կ'երթայ: Ահա Գարանաղցւոյն խօսքերը (Չեռագիր Վիենն.). « Հայք... կու գնան մօտ առ Կեսարացի Գրիգոր Վ.ն՝ որ յայնմ ժամանակին եկեալ էր ի Կեսարիոյ, իբր թէ խրատ տայ՝ եւ տիրութիւն առնէ նոցա: Իսկ նա փոխանակ օրհնելոյն եւ խրատելոյն՝ կու սաստէ եւ կու յանդիմանէ զնոսա ասելով, թէ դուք ո՞վ էք, որ այդպէս բան կու տեսնուք. Փռանկներն եւ սեփական տեղացիքն կը հոգան, եւ այլ ցուրտ բանք շատ կ'ասէ եւ կու յուսահատէ զնոսա... ի յայնմիկ թշուառական ատենին ինքն, այսինքն Գրիգոր Վ.ն, եւ կամ Խուլն՝ բնաւ փոյթ չեն առնոյր ոչ եկեղեցականացն եւ ոչ քրիստոնէից